Արձանագրություն N 3
«ՏԾԻԳ-ԲԸԾՁԲ-2016/3ՏՀ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «28» հունիսի 2016թ.
ժամը 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Գասպարյան

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Ք. Քաբաբյան)

1. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում են՝ «Սահմանաշեն» ՍՊԸ-ի, «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի, «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի, «Գաս» շենքերի ու կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ-ի և «Պռոշաբերդշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը,

բ) չեն համապատասխանում՝ «Դի-Ար-Գե Շին» ՍՊԸ-ի և «Քարազարթ» ՍՊԸ-ի ներկայացված հայտերը հետևյալ հիմնավորմամբ.

- «ԴԻ-ԱՐ-ԳԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում՝ N 4 հավելվածում, (գնային առաջարկ) առաջարկված ընդհանուր գինը տառերով գրված չէ,

- «Քարազարթ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է հրավերով պահանջվող համապատասխան լիցենզիայի ներդիրի պատճենը, սակայն լիցենզիայի պատճենը չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «Սահմանաշեն» ՍՊԸ-ի, «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի, «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի, «Գաս» շենքերի ու կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ-ի և «Պռոշաբերդշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

հայտերը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

բ) «ԴԻ-ԱՐ-ԳԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել «Անբավարար» և մերժել, քանի որ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետև՝ Կարգ) 44-րդ կետի 4)-րդ ենթակետով և 45-րդ կետով կետով սահմանված պահանջների,

գ) Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների համաձայն «Քարազարթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում տեղ գտած անահմապատասխանության համար՝ մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել, տեղեկացնելով մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը,

դ) գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ. հունիսի 30-ին, ժամը 15:30-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ _____ Կ. Գասպարյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Մ. Գասպարյան